# ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշումով, 1958 թվականի ապրիլի 30-ին ստեղծվեց գիտա-հետազոտական նոր հաստատություն՝ Արվեստի ինստիտուտ։

Մինչև նշված ինստիտուտի հիմնումը Գիտությունների ակադեմիայի կազմում գործում էր Արվեստների պատմության և տեսության սեկտորը, որը զբաղվում էր երաժշտության, ճարտարապետության, կերպարվեստի և թատրոնի ուսումնասիրության հարցերով։

Արվեստի սեկտորն իր կազմում ուներ երաժշտական հարուստ արխիվ, որտեղ կենտրոնացված էին անցյալի խոշորագույն գործիչների՝ Կոմիտասի, Չուխաջյանի, Կարա-Մուրզայի, Սպենդիարյանի, Նիկողայոս Տիգրանյանի, Ռոմանոս Մելիքյանի և ուրիշների արխիվները։ Սեկտորն ուներ նաև ձայնագրման կաբինետ, որտեղ կենտրոնացած էին հայ ժողովրդական և գուսանական երաժշտության նմուշներ, որոնք հավաքվել են ինչպես տեղում, այնպես էլ գլխավորապես Հայաստանի շրջաններում՝ Էջմիածնում, Ապարանում, Հոկտեմբերյանում, Թալինում, Արտաշատում, Բայազետում և այլուր՝ երաժշտական արշավախմբերի կողմից կատարած պարբերական ձայնագրումների շնորհիվ։ Ձայնագրված երգերի թիվը երեք հազարից անցնում է։ Սեկտորի այս ֆոնդից օգտվում էին սովետահայ կոմպոզիտորները՝ ստեղծագործական նպատակներով։ Երգի ու պարի անսամբլի ռեպերտուարի զգալի մասը կազմված է Սեկտորի հավաքած ժողովրդական երգերից, որոնք, անշուշտ, ենթարկվել են հատուկ մշակման։ Կազմակերպվել են նաև ճարտարապետական արշավախմբեր գեպի Ասուճ, Ոձուն, Երերույք, Էջմիածին, Ջարչարիս, Զրվարթնոց, Գառնի, Եղվարդ, որտեղ կատարվել են չափագրություններ և մասնակի պեղումներ։

Արվեստների պատմության և տեսության սեկտորը իր գիտա-հետազոտական աշխատանքներին զուգընթաց, հատուկ ուշադրություն է նվիրել արվեստագիտական նոր կադրերի պատրաստմանը։ Վերջին 8—9 տարիների ընթացքում Արվեստի սեկտորի ասպիրանտուրան ընդունվել և ավարտել են մոտ 30 երիտասարդներ, որոնց մի մասը գործուղվել է Մոսկվա և Լենինգրադ՝ նշանավոր մասնագետների ձեռքի տակ հիմնավոր կրթություն ստանալու համար։ Այս տարիների ընթացքում իրենց կրթությունն ավարտած ասպիրանտներից շուրջ քսան հոգի հաջողությամբ դիսերտացիաներ են պաշտպանել ճարտարապետության, երաժշտության, թատրոնի և կերպարվեստի գծով, ու ստացել են արվեստագիտության և ճարտարապետության թեկնածուների գիտական աստիճան։

Արվեստի սեկտորն իր տասնամյա գոյության ընթացքում, հատկապես վերջին հինգ տարում, գիտա-հետազոտական աշխատությունները հրատարակության հանձնելու տեսակետից լայն գործունեություն է ծավալել։ Նրա հրատարակած աշխատությունների ընդհանուր թիվը երեք տասնյակից անցնում է։ Լույս տեսած աշխատություններից պետք է հիշատակել «Հայկական զարդարվեստը», «Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում», «Քասախի բազիլիկայի ճարտարապետությունը», «Հայկական երաժշտական թատրոնը», «Հայկական գավիթների ճարտարապետությունը», «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը», «Սովետահայ երաժշտական կուլտուրան», «Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը», «Շեքսպիրը հայերեն» և այլն։ Լույս են տեսել մենագրական ուսումնասիրություններ նվիրված արվեստի այնպիսի ականավոր դեմքերի, ինչպիսիք են Գևորգ Բաշինջաղյանը, Սիրանույշը, Նադեժդա Պապայանը, Եղիշե Թադևոսյանը, Էդգար Շահինը, Հասմիկը, Օլգա Գուլազյանը, Արուս Ոսկանյանը, Արմեն Տիգրանյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը։ Սեկտորի հրատարակությունների մեջ առանձնակի տեղ են գրավում ռուս-հայկական կապերին նվիրված հետազոտությունները, ինչպես օրինակ, «Մարբիմ Գորկու դրամատուրգիան հայ բեմում», «Հայ-ռուսական թատերական կապերը», «Ռուս-հայկական նկարչական կապերը 19—20-րդ դարերում», «Ռուս դրամատուրգիան հայ բեմում», «Հայ-ռուսական կուլտուրական կապերը և նրանց արտացոլումը ճարտարապետության մեջ», «Հայ թատերագիտական մտքի պատմությունից», «Ռուսական առաջավոր թատերական կուլտուրայի դերը հայ թատրոնի զարգացման մեջ» և այլն։

Արվեստի սեկտորը միաժամանակ զբաղվել է երաժշտական և թատերական ժառանգության հրատարակության գործով։ Այսպես, օրինակ, ձեռնարկված է Ալեքսանդր Սպենդիարյանի երկերի ամբողջական հրատարակությունը, որից արդեն հրատարակված է վեց հատոր։ Հրատարակվել են նաև Սպիրիդոն Մելիքյանի «Հայկական ժողովրդական պարերն ու երգերը», ինչպես և առանձին ստեղծագործություններ Կոմիտասից, Ռոմանոս Մելիքյանից։ Սեկտորի հրատարակությամբ լույս են տեսել Գևորգ Ջմշկյանի թատերական հիշողություն-

ները և Պետրոս Ադամյանի գրական ժառանգության մի հատորյակը։

Ահա այսպիսի ուղի անցնելուց հետո միայն Արվեստի սեկտորի հիմքի վրա ստեղծվեց Արվեստի ինստիտուտ։

Նորաստեղծ ինստիտուտն ունի հինգ սեկտոր—երաժշտության, ճարտարապետության, թատրոնի ու կինոյի, կերպարվեստի և կիրառական արվեստի։ Առաջին չորս սեկտորների նպատակն է՝ ուսումնասիրության ենթարկել հայ արվեստի բազմադարյան ուղին, գրել նրա տարբեր բնագավառների պատմությունը, զբաղվել սովետահայ արվեստի հրատապ հարցերով։ Իսկ վերջին սեկտորի խնդիրը ոչ այնքան պատմա-տեսական է, որքան գործնական։ Այս բոլորովին նոր բնագավառ է ինստիտուտի գործունեության մեջ և այդ պատճառով նա իրեն առայժմ սահմանափակում է գեղարվեստական ասեղնագործության, գեղարվեստական ապակու, ինչպես և մոնումենտալ-դեկորատիվ նկարչության հետ կապված հարցերով միայն։ Գեղումների, հնագույն ձեռագրերի քննության և գեպի գյուղերը կազմակերպած արշավախմբերի միջոցով պետք է ուսումնասիրվեն կիրառական արվեստի ժողովրդական տրադիցիաները, հին ու նոր ձևերը, ազգային ոճը՝ իր հետևողական միասնության մեջ, և գրանց հիման վրա մշակվեն օրինակելի նմուշներ՝ ռեսպուբլիկայի գեղարվեստական արտադրության համար։ Գեղարվեստական ապակու մասնագետն այժմ զբաղված է Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված ապակյա իրեղենի ուսումնասիրությամբ, իսկ գեղարվեստական ասեղնագործությամբ զբաղվողը Մատենադարանի ձեռագրերից հավաքում է հայկական ասեղնագործության մասին եղած տեղեկությունները ու պահպանված նմուշները։

Մոտիկ ապագայում կազմակերպվելու են գիտա-փորձնական արվեստանոցներ՝ կիրառական արվեստի ուսումնասիրությունն ավելի ընդարձակելու և գործնական հիմքերի վրա դնելու համար։

Արվեստի ինստիտուտն այժմ ավելի, քան անցյալներում, մեծ ուշադրություն է նվիրելու ժողովրդական ստեղծագործության ուսումնասիրությանը։ Բացի ժողովրդական երգի գրանցումներից, կազմակերպվելու են ճարտարապետական արշավախմբեր՝ ժողովրդական ճարտարապետության պահպանված օրինակները նկարելու, լուսանկարելու, չափագրելու համար։ Գրանցվելու են նաև հայկական ժողովրդական պարերն ու պարեղանակները։

Ինստիտուտի հետազոտական առաջիկա խնդիրներից մեկն է պատրաստել արվեստի տարբեր ճյուղերի՝ կերպարվեստի, երաժշտության, թատրոնի, կինոյի պատմության համառոտ ակնարկներ։ Այդ ակնարկները, որ նախատեսված են ընթերցող լայն հասարակայնության համար, ընդգրկելու են արվեստի տվյալ բնագավառի պատմությունը, հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը։ Դրանից հետո ինստիտուտը կզբաղվի յուրաքանչյուր բնագավառի պատմության ավելի ամբողջական ուրվագծերի ստեղծումով՝ նվիրելով արվեստի ամեն մի ճյուղի հետազոտությանը մի քանի հատոր ուսումնասիրություն։ Այս տարվանից, օրինակ, ինստիտուտի թատերագետները մի կողմից զբաղվելու են սովետահայ թատրոնի պատմության ուրվագծերով, մյուս կողմից՝ գրելու են արևմտահայ թատրոնի պատմության ընդարձակ ակնարկը։ Բացի այդ, տպագրության է հանձնվելու սովետահայ թատրոնի տպագրության առաջին հատորը, որն ընդգրկելու է 1917—1940 թթ. ժամանակաշրջանը։

Նույնատիպ աշխատանքներ են կատարվելու նաև երաժշտության, ճարտարապետության և կերպարվեստի սեկտորներում։ Ճարտարապետության սեկտորում ավարտված է Զվարթնոցին նվիրված մի ընդարձակ ուսումնասիրություն, և այս տարվանից սկսված է 5—7-րդ դարերի կենտրոնագմբեթ կառուցվածքների հետազոտությունը։ Ավարտվելու վրա է նաև ընդարձակ ուսումնասիրությունը՝ նվիրված Գառնիի ճարտարապետությանը։ Սովետահայ ճարտարապետության բնագավառի հիմնական խնդիրը բնակելի շինարարության հարցերն են, ինչպես և ակադեմիկոս Թամանյանի ժառանգության ուսումնասիրությունը։ Ճարտարապետության սեկտորը միաժամանակ պատրաստում է Երևանի ճարտարապետությանը նվիրված ծավալուն հետազոտություն։

Կերպարվեստի սեկտորում ուսումնասիրվում են հայկական մանրանկարչության գլաձորյան, կիլիկյան և տաթևյան դպրոցները, հայ կերպարվեստը 19-րդ դարում՝ ըստ տարբեր ժանրերի—բնանկար, դիմանկար, պատմական գունանկարչություն և այլն։

Երաժշտության սեկտորը երկու տարի առաջ լույս ընծայեց հայկական երաժշտական թատրոններին նվիրված աշխատության առաջին հատորը, որն ընդգրկում է մեր օպերային երաժշտության անցյալ ներկայացուցիչներին Չուխաջյանից մինչև Սպենդիարյան։ Այժմ պատրաստվում է երկրորդ հատորը, որտեղ տրվելու է սովետական շրջանի օպերային և բալետային երաժշտության բնութագրությունն ու վերլուծությունը։ Սեկտորը զբաղված է Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի գի-

տական հրատարակության գործով։ Արդեն տպագրության է հանձնված առաջին հատորը։ Բացի այդ, ինստիտուտը տպագրության է պատրաստում մենագրական ուսումնասիրություններ՝ նվիրված Կոմիտասին, Մարտիրոս Վարյանին, Ռոմանոս Մելիքյանին, Արամ Խաչատրյանին և ուրիշներին։

Ինստիտուտի հետազոտական կոլեկտիվը համարյա կրկնապատկվել է, աշխատանքի են հրավիրված, երիտասարդ ուժերի հետ միասին, սովետահայ արվեստագիտության նշանավոր դեմքեր։ Արվեստի ինստիտուտն այժմ ունի երաժշտության, կերպարվեստի, պարարվեստի պատմության և կինո-գիտության մեջ մասնագիտացող ասպիրանտներ։

Արվեստի ինստիտուտը տպագրության է հանձնել մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնցից հիշատակության արժանի են հետևյալները. արվեստագիտության թեկնածու Սրբուհի Լիսիցյանի «Հայկական ժողովրդական հինավուրց պարերն ու թատերական ներկայացումները» բառահատոր հետազոտության առաջին գիրքը, պրոֆ. Քր. Քուշնարյովի «Հայկական ժողովրդական միաձայն երաժշտության պատմության և տեսության հարցերից» վերնագրով ծավալուն ուսումնասիրությունը, տպագրության է հանձնված Ռ. Աթայանի՝ հայկական խաղերի վերծանմանն ու ուսումնասիրությանը վերաբերող հետազոտությունը, ինչպես և հայկական կինոարվեստի առանձին հարցերին նվիրված մի ժողովածու, որով մեզանում կինո-գիտության հիմքերն են դրվում։

Գիտական նոր հաստատության առաջին քայլերն են սրանք։ Երբ հիմնարկը վերջնականապես ձևավորվի և նրա հետազոտական անձնակազմը եռանդուն ու նվիրված գործի՝ իր առաջ դրված գիտական խնդիրները հաջողությամբ լուծելու համար, ապա, կասկածից վեր է, որ ինստիտուտը ամենամոտիկ ապագայում կնվաճի ռեսպուբլիկայի արվեստագիտական մտքի կենտրոնին վայել հեղինակություն։

Ռ. ՎԱՐՈՍՅԱՆ

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԸ

Դեռևս 1955 թվականին Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում կազմակերպվեց Արևելագիտական խումբ, որը զբաղվում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների արդի պատմության ու մշակույթի հարցերով։

Խմբում ընդգրկված աշխատակիցների ջանքերով մշակվեցին մի շարք կարևոր թեմաներ, հրատարակվեցին մենագրություններ, որոնց թվում Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.», Ե. Սարգսյանի «Օսմանական կառավարության ագրարային բաղաքականությունը Արևմտյան Հայաստանում 19-րդ դ. երկրորդ կեսին» և «Աշխատավոր մասսաների վիճակը ժամանակակից Թուրքիայում», Հ. Բրյանի «Պայքար նավթի համար» և այլ մենագրություններ։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի կապակցությամբ խումբը հրատարակեց Հ. Եղանյանի «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և ազգային-ազատագրական շարժումները Իրանում (1917—21 թթ.)» և Ե. Սարգսյանի «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և ազգային-ազատագրական շարժումները Թուրքիայում (1918—1921 թթ.)» աշխատությունները։

Պատմության ինստիտուտի կազմում աշխատող արևելագետների խումբը ակտիվ կերպով մասնակցեց 1957 թ. հունիսին Տաշքենտում գումարված Արևելագետների Համամիութենական առաջին կոնֆերանսին, որին մասնակցում էին Միության տարբեր ռեսպուբլիկաների ու մարզերի արևելագետ պատմաբանները, տնտեսագետները, գրականագետներն ու լեզվաբանները։ Պետք է նկատել, որ կոնֆերանսին մասնակցում էին նաև Չինական Ժողովրդական ռեսպուբլիկայի, Կորեական Ժողովրդական-Դեմոկրատական ռեսպուբլիկայի, Վյետնամի Դեմոկրատական ռեսպուբլիկայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի և այլ երկրների ներկայացուցիչները։ Կոնֆերանսի նիստերում լսվեցին ավելի քան հարյուր զեկուցումներ՝ նվիրված արևելագիտության կարևոր խնդիրներին։ Հայաստանի արևելագետները կոնֆերանսում հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով։ Այսպես, պատմական գիտությունների թեկնածու Գ. Սարգսյանը զեկուցեց «Հելլենիստական ժամանակաշրջանում հին բաբելական քաղաքների դրության մասին» թեմայով, Բ. Զուգասդյանը՝ «Հայ և արևելյան ժողովուրդների գրական կա-